ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հոկտեմբերի 15-ից 21-ը Ավստրիական Հանրապետություն (ք. Վիեննա) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը**

   Գայանե Ստեփանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներքին աուդիտի վարչության հարկային մարմնի ներքին աուդիտի բաժնի պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Ավստրիական Հանրապետություն, ք. Վիեննա, հոկտեմբերի 15-ից 21-ը

4. **Հրավիրող կողմը՝**

   Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ) և Վիեննայի համատեղ ինստիտուտ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

   Դասընթացը նախատեսված էր հարկային մարմինների համար, որոնք ուղղակիորեն ներգրավված են հարկային կարգապահության ռիսկերի կառավարմանը՝ ռիսկերի նվազեցմանը, հարկ վճարողների կարգապահության բարելավմանն ուղղված գործընթացներում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ՊԵԿ ներքին աուդիտի վարչության հարկային մարմնի ներքին աուդիտի բաժնի գործառույթը հանդիսանում է հարկային մարմնի միավորների (գործառույթների) ներքին աուդիտի իրականացումը, որի նպատակն է գնահատել հարկային վարչարարություն իրականացնող ստորաբաժանումների կատարված աշխատանքները, գործող ընթացակարգերը, ռիսկերի կառավարումը, արդյունքում վեր հանել խնդիրները և ներկայացնել բարելավմանն ուղղված առաջարկություններ, ուստի դասընթացը միտված է աջակցել հետագայում

հարկային վարչարարության և հարկային ռիսկերի կառավարման առաջադեմ փորձին համապատասխան բալելավմանն ուղղված արդյունավետ առաջարկությունների ներկայացմանը:

Դասընթացի նպատակն էր ներկայացնել հարկային կարգապահության ռիսկերի կառավարման համակարգը, վերջինիս բաղադրիչները, կիրառությունը հարկային վարչարարության գործընթացքում: Դասընթացը ներկայացնում էր, թե ինչպես է հարկային կարգապահության ռիսկերի կառավարման համակարգն օժանդակում հարկային մարմիններին հասնել իրենց հիմնական գործառույթներից՝ հարկ վճարողների կարգապահության կառավարման ու բարելավման գործառույթի արդյունավետ իրականացմանը: Ի թիվս այլ հարցերի, դասընթացը ներառում էր կարգապահության ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպչական, կառավարման ու համակարգման հարցերը, տվյալների հավաքագրումն ու արդյունավետ կիրառումը, ինչպես նաև մի խումբ այլ գործընթացներ ու մեթոդներ, որոնք անհրաժեշտ են նվազագույն ռեսուրսներով հարկ վճարողների առավելագույն կարգապահությունն ապահովելու համար: Դասընթացի նպատակն էր ընդլայնել մասնակիցների կարողությունները հետևյալ ուղղություններով՝

ա) ճշգրիտ գնահատել հարկային կարգապահության ռիսկերի կառավարման համակարգի ռազմավարական դերը հարկային վարչարարության արդյունավետության տեսանկյունից,

բ) սահմանել կարգապահության ռիսկերի կառավարման համակարգի կառուցվածքը, պահանջվող միջոցներն ու ակնկալվող արդյունքները,

գ) բնութագրել ռիսկերի կառավարման համակարգի համար պահանջվող կազմակերպչական ու կառավարման բաղադրիչները, ղեկավար անձնակազմի դերը այդ գործընթացում,

դ) վերհանել այն գործոնները, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ, ինչպես նաև նպաստել ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետ գործարկմանը:

6. Քննարկված թեմաները՝

Դասընթացի ընթացքում ԱՄՀ փորձագետների կողմից ներկայացվել են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից մշակված, ինչպես նաև մի շարք զարգացած հարկային մարմինների կողմից ներդրված կարգապահության ռիսկերի կառավարման մեխանիզմները, կարգապահության ռիսկերի կառավարման գործընթացի շրջանակը, մասնավորապես.

1) ճշգրիտ տեղեկատվության հավաքագրման անհրաժեշտությունը: Այս առումով կարևոր է կարգապահության ռիսկերի գրանցամատյանի վարումը, առկա ռիսկերի վերաբերյալ հստակ պատկերացումը, ռիսկերի գնահատումը՝ ըստ հավանականության ու պետական բյուջեի եկամուտների վրա ազդեցության, ռիսկերի դասակարգումը, առաջնահերթությունների որոշումը, պարբերաբար վերանայումը,

2) ռիսկերի նվազեցմանն ուղղված կարգապահական ծրագրերի մշակումն ու իրականացումը, այդ ծրագրերի պարբերաբար մոնիթորինգը, արդյունքների վերջնական գնահատումը,

3) կարգապահական ռիսկերի նվազեցման համապատասխան միջոցառումների իրականացումը, որի համար անհրաժեշտ է իրականացնել հարկ վճարողների վարքագծային գնահատում, վերհանել կարգազանցության պատճառները և կիրառել այդ պատճառների վերացմանն ուղղված գործիքներ,

դասընթացի ընթացքում շեշտվեց նաև կարգապահության ռիսկերի կառավարման խորհրդի դերը, որը պետք է համակարգի այդ գործընթացը, ապահովի համապատասխան միջոցառումների սահմանումն ու իրականացումը, սահմանի առաջնահերթությունները, իրականացնի վերահսկողություն գործընթացի արդյունավետ իրականացման նկատմամբ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացի ընթացքում կազմակերպվել են խմբային քննարկումներ, առաջադրվել են խնդիրներ, որոնց մասով աշխատանքային խմբերը ներկայացրել են

լուծման տարբերակներ: Մասնակից երկրների միջև եղել է փորձի փոխանակում մի շարք թեմաների շուրջ՝ մասնավորապես.

ա. ինչ առաջընթաց է առկա տվյալ երկրում հարկային կարգապահության ռիսկերի կառավարման համակարգի ներդրման մասով,

բ. որոնք են այդ գործընթացում առկա խնդիրներն ու տվյալ երկրի կողմից մշակված լուծման ուղղությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Դասընթացի ընթացքում ընդունված որոշումներ, պայմանավորվածություններ, ստորագրված փաստաթղթեր չկան:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Առաջարկություններ չկան:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Գայանե Ստեփանյան **24.10.2023թ.**